ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար տոներների, տոներային քարտրիջների և չիպային քարտերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

« 07 » դեկտեմբերի 2023թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար

Արմինե Մարգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-տնտեսագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Աիդա Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46» ծածկագրով ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ նաև հրավեր) պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, ինչպես նաև Համակարգում առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին

1.1 «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 21-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 33-րդ, 36-րդ, 37-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

1.2 «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև 9-րդ, 11-րդ, 13-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 35-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

1.3 «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև 34-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

«ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) նշված է, որ «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ: «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված N 1.2-ի, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության պահանջների համաձայն, ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև (Հավելված N 1.3):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի (հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1 «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (Հավելված N 1.3) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 21-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 33-րդ, 36-րդ, 37-րդ չափաբաժինների մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին,
- մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատած անձին՝ այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթղթում (լիազորագրում) նշված է, որ լիազորագիրը տրվել է. «...էլեկտրոնային ստորագրությամբ մրցույթների փաստաթղթերի ստորագրման համար», այն դեպքում, երբ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է ոչ թե մրցույթի, այլ էլեկտրոնային աճուրդով գնում կատարելու ընթացակարգով:

2.2 «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (Հավելված N 1.3) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- 9-րդ, 11-րդ, 13-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 35-րդ չափաբաժինների մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում են բավարար:

2.3 «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում-հայտարարությունում (Հավելված 1) «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ն հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել Դատական դեպարտամենտի կողմից «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի 1-ին չափաբաժնին, այն դեպքում, երբ «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46» ծածկագրով գնման ընթացակարգի 33-րդ, 34-րդ, 36-րդ, 37-րդ չափաբաժինների մասով,
- դիմում-հայտարարության (Հավելված N 1) 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ,

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (Հավելված N 1.3) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- 34-րդ չափաբաժնի մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

Նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. դեկտեմբերի 11-ին, ժամը 12:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11 կետի պահանջներով՝ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի, «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ի հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **դեկտեմբերի 8-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

_____ Արմինե Մարգարյան

Քարտուղար՝

_____ Աիդա Հովհաննիսյան